

**ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ. ԳՊՀ-Ն ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է 2020-2021
ՈՒՏԱՐՎԱ ՀԵՌԱԿԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ**



Գավառի պետական համալսարանը հայտարարում է 2020-2021 ուսումնական տարվա բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցման ընդունելություն: Դիմորդների գործերն ընդունվում են ս. ք. սեպտեմբերի 10-ից մինչև սեպտեմբերի 30-ը՝ ամեն օր ժամը 9⁰⁰-ից մինչև 18⁰⁰ -ն:

Դիմորդները դիմում-հայտի հետ ներկայացնում են՝

1. անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր, նույնականացման քարտ, ծննդյան վկայական, ՀՀ հատուկ անձնագիր, կացության վկայական),
2. միջնակարգ կրթության ատեստատը կամ միջին մասնագիտական կամ մասնագիտական տեխնիկական կրթության մասին ավարտական փաստաթուղթը՝ համապատասխան ներդիրով,
3. 6 լուսանկար (3 x 4 սմ չափսի),
4. զինվորական գրքույկ /առկայության դեպքում/ կամ զինվորական կոմիսարիատից տեղեկանք ժամկետային զինվորական ծառայությունը անցնելու մասին (արական սեռի դիմորդների համար),
5. 1-ին կամ 2-րդ խմբի և մինչև 18 տարեկան մանկուց հաշմանդամության, առանց ծնողական խնամքի մնացած լինելու մասին փաստաթղթեր, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության ոստիկանության և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության տված տեղեկանքներ /առկայության դեպքում/,
6. միջազգային և հանրապետական մրցույթների (օլիմպիադաներ, փառատոններ) դիպլոմները /առկայության դեպքում/,
7. «Գնահատման և թեստավորման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված միասնական քննությունների վկայագիր /առկայության դեպքում/,
8. առկա ուսուցման համակարգում սովորող անձինք, հեռակա ուսուցման ընդունելության մրցույթին մասնակցելու համար կարող են ներկայացնել միջնակարգ կրթության ատեստատի կրկնօրինակը՝ այն բուհի նշագրումով և կնիքով, որտեղ գտնվում է բնօրինակը,
9. ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանք, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի N 1444-Ն որոշման N 1 հավելվածում ներառված սոցիալական աջակցություն ստացող համայնքներում հաշվառված և վերջին հինգ տարում մշտապես բնակվելու վերաբերյալ տեղեկանք /առկայության դեպքում/,
10. դիմում-հայտն առցանց լրացնելու դեպքում դիմորդը ներկայացնում է սույն կետով սահմանված փաստաթղթերի կրկնօրինակները՝ էլեկտրոնային եղանակով, իսկ բնօրինակները՝ բուհ ընդունվելուց հետո,
11. քննությունների կազմակերպման և անցկացման նպատակով քննության համար դիմորդը ԳՊՀ-ում կամ բուհի համապատասխան հաշվեհամարին /ՎՏԲ-Հայաստան բանկ ՓԲԸ՝ հաշիվ 16021100146800 Արդշին բանկ ՓԲԸ 2471800045970000/ վճարում է 1500 դրամ:

Դիմորդների գործերն ընդունվում են համալսարանում ԳՊՀ կենտրոնական մասնաշենք, 2-րդ հարկ, 218 սենյակ, ինչպես նաև առցանց ձևաչափով՝ «www.dimord.gsu.am» էլեկտրոնային հարթակի միջոցով:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել 060-46-01-02, 060-46-04-03, 060-46-12-43, 0-264-2-57-75 հեռախոսահամարներով:

Փաստաթղթերի ընդունման ժամկետը լրանալուց հետո դիմորդների կողմից լրացուցիչ փաստաթղթեր ներկայացնելն արգելվում է: Քննություններին և մրցույթին մասնակցելու դիմում-հայտը փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտից հետո փոփոխման ենթակա չէ:

ԳՊՀ ընդունող հանճնաժողով

